ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 8.12. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ հեռահար կապի միջոցով

Հաղորդագրություններ են ուղարկել ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 14-ը (տասնչորս):

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական
5. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
6. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
8. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
9. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
10. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
11. Լ. Մարտիրոսյան՝բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ,
12. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
13. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
14. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան

ՕՐԱԿԱՐԳ

1. Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների նկատմամբ սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուների հաշվետվության մասին

Ներկայացնող՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

2. Մանկավարժական պրակտիկաների կազմակերպման և ժամանակահատվածների մասին

Ներկայացնող՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

3.Պատերազմական գործողություններին մասնակցած ուսանողներին ակադեմիական պարտքերի համար վճարվող գումարից ազատման մասին

Ներկայացնող՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

1. ԼՍԵՑԻՆ՝ Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների նկատմամբ սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուների հաշվետվության մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների համար այս ընթացքում բուհի կողմից հսկայական աշխատանք է կատարվել: Նա հատկապես շեշտեց, որ սննդի կազմակերպման և այլ կազմակերպչական բնույթի գործառույթների իրականացման պատասխանատու ռազմական ամբիոնի պարետ-պատասխանատու Երվանդ Աթոյանի, սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուներ Անդրանիկ Շահինյանի և Ամալյա Խաղունովայի կատարած դրական աշխատանքները: Տիկին Ավետիսյանը ռեկտորոտի անդամներին ներկայացրեց նաև սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուների աշխատանքի հաշվետվությունը՝ նշելով, որ այն սեղմ ու համապարփակ ներկայացվել է իրեն:

Տիկին Ավետիսյանը նշեց, որ մեր հայրենակիցների սննդի, կացության հարցերը կազմակերպելու, նրանց սոցիալական ու հոգեբանական օգնություն ցուցաբերելու գործում օգտագործվել են համալսարանի ողջ ռեսուրսները: Մեր 28 հայրենակիցներից 19 երեխա էին: Նրանց հետ կապված բոլոր հարցերը՝ սկսած սննդի լուծման հարցից, մինչև բուժօգնություն, սոցիալական ու հոգեբանական օգնություն, կազմակերպվել են նաև համալսարանի ամբիոնների, կենտրոնների, ուսխորհրդի արագ արձագանքմամբ ու անտրտունջ մասնակցությամբ: Նա խոսեց նաև բուհի արհեստակցական կազմակերպության կողմից կատարված աշխատանքների և հատկապես արհկոմի կողմից ցուցաբերած ֆինանսական օգնության մասին:

Տիկին Ավետիսյանը հաշվետվությունը հիմք ընդունելով, շնորհակալություն հայտնելով այս հարցում իրենց հետ ակտիվ համագործակցող համալսարանի աշխատակիցներին, ռեկտորատի անունից շնորհակալագրեր շնորհեց Երվանդ Աթոյանին, Անդրանիկ Շահինյանին, Ամալյա Խաղունովային, հյուրատան աշխատակցուհի Սուսաննա Ասլանյանին և առաջարկեց նաև դրամական պարգևավճարի արժանացնել նրանց:

ԱՐՏՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ռ. Մարդոյանը, ում կարծիքով տիկին Ավետիսյանի առաջարկն ընդունելի է:
Ա. Սարգսյանն առաջարկեց թափանցելիության նկատառումներով հաշվետվությունը տեղադրել կայքում:
Պարոն Սերոբյանը հանձնարարեց պարոն Քալաջյանին համալսարանի կողմից ՀՀ համահայկական հիմնադրամին փոխանցումների վերաբերյալ բանկի կողմից գրություն ստանալ և այն նույնպես կայքում տեղադրել՝ որպես հանրային հաշվետվություն:
Պարոն Սերոբյանն առաջարկեց, որ համալսարանի այն աշխատակիցները, որոնք մասնակցել են մարտական գործողություններին նույնպես դրամական պարգևավճարի արժանանան, անկախ այն բանից, որ նրանք այս ընթացքում ստացել են իրենց աշխատավարձը:
ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների նկատմամբ սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուների աշխատանքի հաշվետվությունն ընդունել:

2. Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների նկատմամբ ցուցաբերած հոգատար ու անմնացորդ աշխատանքի համար ՇՊՀ-ի ռազմական ամբիոնի պարետ-պատասխանատու Երվանդ Աթոյանին (կացության և

սննդի հարցերով պատասխանատու), սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի «Հոգեբանության, սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանք»-ի ամբիոնի դասախոսներ Անդրանիկ Շահինյանին, Ամալյա Խաղունովային (սոցիալական խնամք իրականացնող խմբի պատասխանատուներ) և հյուրատան աշխատակցուհի Սուսաննա Ասլանյանին պարգևատրել ՇՊՀ ռեկտորի կողմից շնորհակալագրերով և դրամական պարգևավճարի արժանացնել՝ յուրաքանչյուրին 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Մանկավարժական պրակտիկաների անցկացման վայրերի փոփոխման մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ պրակտիկայի որոշ մասը ուսանողները առցանց են անցկացրել(ս/թ.-ի նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 7-ը), քանի որ դպրոցներում դասերը կազմակերպվում էին առցանց, սակայն դեկտեմբերի 7-ից, երբ դասերը կազմակերպվում են առկա, մանկավարժական պրակտիկայի մյուս մասը (դեկտեմբերի 8-ից դեկտեմբերի 18-ը) նախատեսվում է անցկացնել ՇՊՀ քոլեջում և համալսարանի առաջին կուրսերում: Պրակտիկայի անցկացման ձևը մնում է նույնը, այն անցկացվում է հեռավար, արդյունքների ամփոփումը կատարվում է մեկ գործոնով՝ ըստ մեթոդիստի կողմից նշանակված գնահատականի (նախկին 3 գործոնների փոխարեն):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Մանկավարժական պրակտիկան անցկացնել ՇՊՀ քոլեջում և համալսարանի առաջին կուրսերում:
Պրակտիկայի անցկացման ձևը մնում է նույնը, այն անցկացվում է հեռավար՝ ս.թ.-ի դեկտեմբերի 8-ից դեկտեմբերի 18-ը ներառյալ,
Արդյունքների ամփոփումը կատարել մեկ գործոնով՝ ըստ մեթոդիստի կողմից նշանակված գնահատականի (նախկին 3 գործոնների փոխարեն):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Պատերազմական գործողություններին մասնակցած ուսանողներին ակադեմիական պարտքերի համար վճարվող գումարից ազատելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Պատերազմական գործողություններին մասնակցած ուսանողներին ազատել ակադեմիական պարտքերի համար վճարվող գումարից՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ս. Շահպարոնյան Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ՝	Լ. Մարտիրոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան